

թեան: Այսպէս Կիլիկեան Կաթողիկոսութիւնը վերակենդանացաւ և ընդհանուր հաւանութեամբ և օժանդակութեամբ, և Բաբելոն Աթոռակից Կաթողիկոսի ջանքերով, վերակազմուեցաւ: Կիլիկեան Կաթողիկոսութեան նոր աթոռանիստը, Անթիլիաս, կրթական կեդրոնի մը վերածուելու ճամբուն մէջ մտաւ, ինչ որ էր առհասարակ ամենուն փափաքը և ակնկալութիւնը Կիլիկեան Կաթողիկոսութեան վերակենդանացման մէջ:

Սահայն Կիլիկեան Կաթողիկոսութեան օտար հողի վրայ վերահաստատման գործին օգնողներն ու նպաստողները երբեք մաքէ անգամ չանցուցին որ օր մը այս մասնաւոր Կաթողիկոսութիւնը ինքզինք պիտի ուզէր հակադրել Ամենայն Հայոց Մայր Աթոռին: Անոնք կը խորհէին միայն՝ որ նուիրապետական կազմակերպութեան մը հաստատումն ու զօրացումը Սուրբոյ և Լիբանանի հոծ հայութեան ծոցին մէջ՝ պիտի նպաստէր Արտասահմանի մէջ հոգևոր կեանքի զարգացման և զիտակից հոգևորականներու պատրաստութեան: Պէտք է ցաւով դիտել սակայն որ ներկայ ծանօթ պայքարները Եկեղեցիի ծոցին մէջ՝ մեծ շափով ի դերն կը հանեն այդ յոյսերն ու ակնկալութիւնները:

Անհրաժեշտ է հետեւաբար, վերև տրուած բացատրութեանց լոյսին տակ, որ եկեղեցական-վարչական հիմնական սկզբունքներու և ոլլմտութեան ճանապարհով՝ կերպ մը զտնուի խաղաղութիւնն ու օրինաւորութիւնը հաստատելու, և Մերձաւոր Արևելքի մէջ մեր Եկեղեցւոյ կենսական գործը իր բնականոն հունին մէջ զնելու համար:

Եւ որպէսզի կարելի ըլլայ այդ՝ հարկ է որ Եկեղեցւոյ առաջնորդներուն և ժողովրդական մարմիններուն կողմէ առնուած քայլերը, փոխանակ խորացնելու և կարծրացնելու յառաջ եկած ճեղքուածքը՝ աւելի միտին դիւրացնելու յառաջիկայի համերաշխութիւնը և կացութեան կանոնաւորումը:

Այս պէտք է ըլլայ ալօթքն ու ջանքը ճշմարտապէս եկեղեցասէր ամէն հայու:

ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Տաքեւացիին կ'ըսէ.

— «Այլ գիտելի է զի Քրիստոս զընչիս է Եկեղեցւոյ, եւ հաւատացեալ՝ մարմին եւ անդամք նորա»:

— «Մի է Քրիստոս եւ մի մարմին նորա, որ կոչի մի Կաթողիկէ Եկեղեցի»:

— «Կաթողիկէն ընդհանրական լսի, իսկ Եկեղեցին՝ ժողովումն»:

— «Մի է ամենայն ընդհանուր Եկեղեցիք, որ է բոլոր Քրիստոնեայք բոլոր հաւատոյն եւ կոչմանն յուսոյն որպէս սեռի»:

— «Գլուխ Եկեղեցւոյ է՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որպէս ասացաւ, եւ փոխանորդ նորա ի յերկրի ի հիմն քահանայապետն, որպէս Ահարոն, եւ ի նորա Կաթողիկոսն իւրաքանչիւր ազգի»:

(Գիրք Հարցմանց, էջ 532-4)